ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ, աշխատասիրությամբ Պողոս Խաչատրյանի, *«Հայագիտակ» հրատ., Երևան, 2000, 992 էջ:*

Հրապարակի վրա է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Պողոս Խաչատրյանի աշխատասիրությամբ և բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դևրիկյանի մասնակի աշխատակցությամբ կազմված «Գանձարան հայ հին բանաստեղծության» խորագրով մեծածավալ ժողովածուն: Այն տպագրվել է աթենքահայ բարերարներ Տեր և Տիկին Վարուժան և Անժել Գնունիների նյութական հոգածությամբ և Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հովանավորությամբ: Գիրքը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Ժողովածուն ընդգրկում է հայ հին բանաստեղծական մշակույթի ընտիր նմուշները՝ սկսած նախագրային վիպական բանահյուսությունից, վերջացրած XVIII դարով: Ժողովածուի նյութերը համակարգված են ժամանակագրական կայուն սկզբունքով և տեղաբաշխված հինգ հիմնական բաժիններում: Առաջին բաժինը խորագրված է «Փշրանքներ նախամաշտոցյան շրջանի բանահյուսությունից» և ընդգրկում է նախագրային ժամանակների հայ հնագույն բանավոր ավանդության վիպական նմուշները՝ ավանդված հիմնականում Մ.Խորենացու «Հայոց պատմությամբ»: Երկրորդ բաժինը վերնագրված է «Վաղմիջնադարյան բանաստեղծություն» և ընդգրկում է V–X դդ. հայ բանաստեղծության ընտիր նմուշները՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից, վերջացրած X դ. Նարեկյան գպրոցի նշանավոր ներկայացուցիչ Անանիա Նարեկացիով: Երրորդ բաժինը «Վերածնության բանաստեղծություն», ներառում է X–XIV դդ. հայ բանաստեղծական մշակույթը՝ սկսած Գրիգոր Նարեկացուց, վերջացրած XIV դ. բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցիով: Չորրորդ բաժինը, որ կոչվում է «Ուշմիջնադարյան բանաստեղծություն», ընդգրկում է XV–XVII դդ. բանաստեղծական նմուշները՝ սկսած Գրիգոր Խլաթեցուց, վերջացրած «Մոկաց Միրզա», «Կարոս խաչ» և այլ ժողովրդական վիպերգերով: Եվ, վերջապես հինգերորդ բաժինը՝ խորագրված «Նոր բանաստեղծության նախաշեմին», ներառում է XVIII դ. բանաստեղծության նմուշները՝ սկսած Մխիթար Սեբաստացուց, վերջացրած Սայաթ-Նովայով:

Այս հինգ բաժիններում, ժամանակագրական հաջորդականությամբ, հին գրավոր բանաստեղծությանը զուգահեռ, կազմողներն ընդգրկել են նաև ժողովրդական բանահյուսության մի շարք ընտիր նմուշներ, որով առավել հարուստ ու ընդգրկուն է դարձել հայ հին բանաստեղծական մշակույթի ամբողջական պատկերը:

Նյութի ընտրությունը կատարվել է հայ հին գրականության մերօրյա լավագույն գիտակ պրոֆ. Պողոս Խաչատրյանի կողմից, որի մասնագիտական հմտությունները, նյութի խորիմացությունը, գեղագիտական ճաշակը դրսևորվել են ոչ միայն բանաստեղծական նյութի ընտրության մեջ, այլև դրա տեքստաբանական մատուցման, դրապատմական իմաստավորման, գնահատման ու արժևորման հարցերում, որոնց բացահայտ վկայություններն արձանագրված են թե՛ «Գանձարանի» «Կազմողների կողմից» առաջաբանում և թե՛ բանաստեղծների կենսագրական տվյալներում ու հմուտ ծանոթագրություններում: Այդ վկայություններն ու ընտրված բանաստեղծական նյութերի գիտական համակարգումը պարզում են, որ կազմողները, և առաջին հերթին Պ. Խաչատրյանը, «Գանձարանը» ստեղծելիս ելակետ են ընդունել հայ հին դրականության ծագման ու պատմական զարգացման օրինաչափությունների պարբերացման Մ. Աբեղյանի մշակած տեսությունը, որն արգարացիորեն գնահատված է որպես «ամենահիմնավորն ու ամենակատարյալը», որը

«ճիշտ է արտացոլում նաև հայ հին բանաստեղծության զարգացման սլացքն ու գաղափարական միտումները առանձին վերցրած յուրաքանչյուր պարբերաշրջանի համար» (էջ 6)։ Աբեղյանի պարբերացման համաձայն էլ նրանք առանձնացրել են հայ բանաստեղծության զարգացման մի ամբողջ պատմաշրջան «Վերածնունդի բանաստեղծություն», սակայն ի տարբերություն Աբեղյանի, միայն մեկ վերապահությամբ։ Եթե Մ. Աբեղյանի պարբերացմամբ, իր իսկ բացահայտած «Վերածնունդի գրականությունը» ժամանակագրորեն ընդգրկում էր XI–XVII դդ., ապա կազմողները արդարացի կռվաններով դրա ժամանակագրական ընդգրկումը սահմանափակել են XIV դ. վերջերով, ինչի համար հիմք են ծառայել նաև Աբեղյանի որոշ վերապահումները։ Այդ մոտեցմամբ էլ նրանք XV–XVII դդ. բանաստեղծության զարդացումն առանձնացրել են իբրև առանձին պարբերաշրջան և այն անվանել «Ուշմիջնադարյան բանաստեղծություն»։ Ուշադրավ է հատկապես, կազմողների կողմից XVIII դ. բանաստեղծության առանձնացումն իբրև առանձին պարբերաշրջան և դրա «Նոր բանաստեղծության նախաշեմին» խոսուն անվանումը։ Այս պարբերաշրջանի նախատարրերը ևս գալիս են Մ. Աբեղյանից։ Վերջինս, տակավին 1910-ական թվականներին, XVII դ. և XIX դ. առաջին երեսնամյակի գրականությունը համարում էր հայ նոր գրականության սկզբնավորման շրջան։ Հետագայում (1941թ.) նա վերանայում է այս տեսակետը և այդ շրջանի գրականությունը համարում է հին գրականության վերջին պարբերաշրջան և այն անվանում «Եկեղեցական գրականության վերածնություն՝ նոր կրոնական շարժման հետևանքով <...> նոր գրաբար և աշխարհիկ գրականություններ», իսկ ավելի ուշ, «Հայ հին գրականության պատմությունը» գրելու նախօրեին այդ շրջանն անվանում է «Գրականության նորոդումը XVII–XIX դարերում»[1]։ Աբեղյանի տեսակետների այս տատանումներն, անշուշտ, արդյունք էին այդ շրջանի գրականության հնից նորին անցնելու երկվությանը, որ լավագույնս արտահայտվել է XVIII դ. բանաստեղծության պարբերաշրջանին կազմողների տված անվան մեջ։ Դարձյալ Աբեղյանի հիմնարար տեսության և անառարկելի փաստերի հաշվառման հետևանք է այն իրողությունը, որ կազմողները, հակաուակ հանրության մեջ արմատացած սխալ պատկերացման, XVI դ. աշուղ Նահապետ Քուչակին անարդարացիորեն վերագրվող հայրեններին, որոնք տարբեր գարերի ժողովրդական տարբեր երգիչ-դուսանների բանաստեղծական մտքի արդյունք են անջատել են ուշ միջնադարի այդ աշուղի գրական ժառանգությունից և իրավացիորեն տեղակայել իրենց բուն տեղում՝ XI–XIV դդ. հայկական վերածննդի բանաստեղծությունների բաժնում, իբրև այդ մտավոր նոր հոսանքի ամենավառ արտահայտություններ։ Նույն մոտեցմամբ կազմողները, հայրեններից անմիջապես հետո և նույն բաժնում են գետեղել Ակնա անտունիները, որոնք նույն հայրեններն են կամ դրանց տարբերակները, միայն այլ անվամբ պահպանվել են ժողովրդական բանավոր ավանդության մեջ և գրառվել XIX դ. և XX-ի սկզբներում տարբեր բանահավաքների կողմից (Հ. Ճանիկյան և այլք)։

Բնագրերը մատուցելիս կազմողները միանշանակ վերաբերմունք չեն ցուցաբերել դրանց նկատմամբ։ Ընտրված բնագրերը ճնշող մեծամասնությամբ ներկայացվել են ամբողջական տեսքով, իսկ երբեմն էլ, ելնելով ժողովածուի հանրամատչելի նպատակներից, դրանք ներկայացրել են որոշակի կրճատումներով, հատվածներով ու հապավումներով, որոնց մասին ծանուցված է յուրաքանչյուր նման բնագրի խորագրի տակ։ Դրանով իսկ ընթերցողին նախ տեղեկացվում է բնագրի ամբողջականության մասին, մյուս կողմից, որ կարևոր է, միջնադարյան բնագրերը որոշակի սկզբունքով բեռնաթափվել են արդի ընթերցողի ճաշակն ու հետաքրքրությունը չբավարարող անհարկի մանրամասնություններից։ «Գանձարան»-ում այդ կերպ ընդգրկված են 155 հեղինակային, անհեղինակ և ժողովրդական բանաստեղծությունների շարքեր բաղկացած ավելի քան 700 բանաս-

1 Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն - յ ա ն. Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը. Երևան, 1970, էջ 299-301, 349-351։

տեղական միավորներից: Բնագրերի ճնշող մեծամասնությունը քաղված է գիտական հրատարակություններից, իսկ մի մասն էլ անմիջապես միջնադարյան ձեռագրերից:

Ժողովածուն, բնագրերի բաժնից բացի, որ, բնականաբար, աշխատության ամենածավալուն մասն է (շուրջ 860 էջ), բաղկացած է նաև առաջաբանից, հեղինակների կենսագրական տեղեկատուից և ծանոթագրություններից, բառարանից և բնագրերի ցանկից, բոլորն էլ շարադրված կամ կազմված Պ. Խաչատրյանի կողմից:

Տեղեկատվական և աղբյուրագիտական առանձնակի արժեքով է հատկանշվում «Կենսագրական տեղեկատու և ծանոթագրություններ» բաժինը: Այստեղ, նախ խիստ հակիրճ ներկայացվում են յուրաքանչյուր հեղինակի կենսագրական տվյալները, նրա թողած բանաստեղծական կամ մշակութային ժառանգությունը, ապա մեկնաբանվում են ժողովածուում ընդգրկված ստեղծագործություններում առկա ծանոթագրության կարոտ իրողությունները և հարակից այլ խնդիրներ: Այստեղ նշված են նաև այն սկզբնաղբյուրները, որտեղից քաղված են ժողովածուում զետեղված տվյալ հեղինակի կամ բանահյուսական տվյալ շարքի ստեղծագործությունները:

Ընդհանուր առմամբ գնահատելով սույն աշխատության գրական-բանասիրական և մշակութաբանական արժեքն ու արժանիքները, հարկ է նկատի ունենալ հետևյալը: Վերջին երեսնամյակում մեր գրականագետ մտավորականության տարբեր ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմվել և հրատարակվել են հայ միջնադարյան քնարերգության և գեղարվեստական արձակի նմուշներն ամփոփող մի քանի ժողովածուներ, որոնք մեծ դեր են կատարել ընթերցող հասարակության լայն շրջաններին մեր հին դրականության լավագույն նմուշներին ծանոթացնելու և դրանք պրոպագանդելու ուղղությամբ: Այս տեսակետից սույն աշխատությունը տարբերվում և առանձնանում է նախորդներից մի քանի առումներով: Առաջինը նյութի անհամեմատ լայն ընդգրկումն է (արձանագրված նաև սույն գրքի առաջաբանում), որն արտացոլում է մեր հին բանաստեղծության ժանրային հարուստ ու բազմաբղետ համակարգի ամբողջական համապատկերը: Սույն ժողովածուում առաջնակարգ տեղ է հատկացված հայ հոգևոր քնարերգության նմուշներին՝ շարականներին, հոգևոր տաղերին, ինչպես նաև աշխարհիկ քնարերգության այնպիսի ներկայացուցիչների (Ֆրիկ և ուրիշներ) կրոնական բանաստեղծություններին, որոնք մերձավոր անցյալում տեղ չէին գտնում անգամ նրանց գրական ժառանգության գիտական հրատարակություններում: Այս իմաստով սույն ժողովածուն ունի բացառիկ արժեք:

Հաջորդ նորությունն այն է, որ «Գանձարան»-ում միջնադարյան անհատ հեղինակների ստեղծագործություններին զուգահեռ, խիստ ընտրությամբ և համապատասխան հիմնավորումներով, զետեղվել են ոչ միայն միջնադարում, այլև XIX–XX դդ. գրառված ժողովրդական բանահյուսության նմուշներ, դիցուք՝ «Սասնա Ծռեր» հերոսավեպը, վիպական երգերը, Ակնա անտունիները, մի շարք ծիսական, աշխատանքային երգեր, որոնք բովանդակությամբ, ոճաարտահայտչական բնույթով մերձենում են միջնադարյան բանաստեղծության այս կամ այն պատմաշրջանին և իրավամբ զետեղվել այդ պատմաշրջանների բանաստեղծությունների շարքերում: Գուցե խիստ չափանիշներով մոտենալով խնդրին կարելի էր առարկել XIX–XX դդ. բանասացներից գրառված բանահյուսական նմուշները ետ տանելու և միջնադարյան գրավոր բանաստեղծության շարքերում դրանց տեղակայման դեմ, սակայն դա կլիներ ավելորդ մանրախնդրություն, քանզի, ինչպես ցույց են տալիս գրական-բանահյուսական փաստերը (դիցուք՝ միջնադարյան հայրենների և բանավոր ավանդված անտունիների, Նարեկացու մասին միջնադարյան զրույցների և բանավոր ավանդված համանուն վիպերգերի փոխհարաբերությունը), տարբերություններն աննշան են: Ավելին, թերևս կարելի է դիտողության կարգով ավելացնել՝ թե կազմողներն ինչու՞ բանահյուսական նմուշների մեջ չեն ներառել հարսանեկան ծիսերգերը, մասնավորապես թագվորագովքերը, որոնք հնավանդ են և իրենց զուգա-

հեռներն ունեն հայ միջնադարյան բանաստեղծական նմուշներում:

Թեպետ սույն աշխատությունը գիտական հատուկ նպատակներ չի հետապնդում և կրում է հանրամատչելի բնույթ, բայց իրագործված լինելով միջնադարյան դրականության հմուտ մասնագետների կողմից, գիտական խստապահանջությամբ և քննական սկզբունքային վերաբերմունքով, ինքնին իր նկատմամբ ստեղծում է գիտական արժանավստահություն և հեղինակություն, մի բան, որ, ցավոք, հատուկ չէ նմանատիպ հանրամատչելի շատ հրատարակություններին:

Եվ այս առումով սույն աշխատությունը բացառիկ է, մանավանդ իր ընդգրկած նյութով ու մատուցմամբ, մեր հազարամյա բանաստեղծական մշակույթի չքեղ նմուշները մի գրքում ամփոփող մի իսկատիպ հարուստ գանձարան, որին այսուհետև դիմելու է յուրաքանչյուր ոք, ով շահագրգռված է մեր հին բանաստեղծության պատմական ողջ ընթացքի համապատկերի իմացությամբ: Այս «Գանձարանը» մի հրաշալի նվեր է նաև հայոց քրիստոնեական դարձի ընթացիկ հոբելյանին, պատմական մի վճռորոշ իրադարձության, որով պայմանավորված էր նաև մեր հին գրականության սկզբնավորումն ու բուռն զարգացումը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ